V. A. IGUMNOV, Z. G. STEPANIAN

ON THE ERRORS OF GEOCHEMICAL REGIME OBSERVATIONS

A b s t r a c t

Different errors of sampling, analysis and results interpretation during long term observations connected with the earthquakes g ochemical precursors search are considered in this paper

ЛИТЕРАТУРА

1. *Асланян А. Т.* Региональная геология Армении. Ереван.: Айпетрат. 1958. 186 с.
2. Воды минеральные питьевые лечебные, лечебно-столовые и природные столовые. ГОСТ 23268.0—78—ГОСТ 23268. 18—78. М.: Госстандарт. 1978. с. 7—92.
3. *Габриелян А. А.* Тектоническая карта и карта интрузивных формаций Армянской ССР (объяснительная записка). Ереван.: Минк. 1968. 42. с.
4. Инструкция по методике и технике проведения водно-гелиевой съемки. Л.: Мингео СССР. 1975. с. 11—24.
5. Метрологическая аттестация методик выполнения измерений содержаний компонентов проб веществ и материалов. ГОСТ 8.505—84 М.: Госстандарт. 1984 с. 5—12.
6. *Хахенберг Х. ,Шмидт А.* Газохроматографический анализ равновесной паровой фазы. М.: Мир. 1979. с. 17—42.
7. Яницкий И. Н. Гелиевая съемка. М.: Недра. 1979. с. 25—51.

Известия АН Армении. Науки о Земле. 1992. XLV. № 3. 52—59.

УДК 911.9.504.03(479.25)

Գ. Բ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ԲՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանրապետության սահմաններում կազմակերպված հատուկ պահպանվող բնական տարածքների ցանցը չի ներառնում պահպանման կարիք զգացող բոլոր բնական բարձրարժեք առաջացումները, և բացի այդ, գիտականորեն հիմնավորված չեն նրանց սահմանազատումները։

Հոդվածում քննարկվում են հատուկ պահպանվող բնական տարածքների առանձնացման ու բնապահպանական ձևերի ընտրման լանդշաֆտաաշխարհագրական սկզբունքները, մասնավորապես պահպանվող տարածքների ֆունկցիոնալ սահմանազատումների ժամանակ ավազանային մեթոդի կիրառման անհրաժեշտությունը։

Նման տարածքների լայն ցանցի և ֆունկցիոնալ ձևերի ճիշտ ընտրումը կնպաստեն վրձռելու նաև էրկրաէկոլոգիական հարցերը։

Մարդկությանը հուզող ժամանակակից սոցիալ-տնտեսական կարևորագույն պրոբլեմներից մեկը շրջակա միջավայրի պահպանումն է։ Դրան են նվիրված գիտական մտքի ջանքերը, ինչպես և նյութական հսկայական ծախսումները։ Բանը նրանումն է, որ գիտական և տեխնիկական նվաճումները հնարավորություն են ընձեռնել լայն մասշտաբներով օգտագործելու բնական ռեսուրսները, արտադրական ոլորտ ընդգրկելով նորանոր տարածքներ։ Այդ բոլորն իրենց հերթին բերում են բնական միջավայրի կայուն վիճակի խախտում։

Բնական հումքի խոշոր աղբյուրների ասոիճանական նվազումը պայման է հանդիսացել սակավ քանակի ու որակի՝ անցյալում չօգտագործվող, հումքանյութերի և նրանցով բռնված տարածքների արտադրության մեջ ընդգրկման։ Սակայն երբեմն նման տարածքներն ունեն էքստրեմալ պայմաններ կամ եղակի բնական համալիրներ, դրանցից անգամ աննշան չափերով կենսածին ռեսուրսների օգտագործումը բերում է միջավայրի վիճակի կտրուկ վատթարացման։

Ինչպես վկայում են Երկրի մասին գիտությունները, երկրագնդի տարբեր մասերում բնական միջավայրի հավասարակշռված վիճակը արդյունք է նրա առանձին տարրերի և բաղադրամասերի (էկոսիստեմների) համաչափված զարգացման ու փոփոխման որոշակի դինամիկական ընթացքի։ Եթե փոփոխությունները վերականգնվող են, բնությունը կարողանում է զարգացման ընթացքում բուժել իր «վերքերը» վերականգնել բնական միջավայրի հավասարակշռությունը։ Սակայն մարդկային գործունեության պատճառով այսօր, բնական համալիրների խափանումները անվերադարձ են։ Շատ վայրերում ստեղծվել են ճգնաժամային վիճակներ՝ խախտվել են միջավայրի բնական զարգացման պայմանները և մեխանիզմները։ Այդ բոլորն իրենց հերթին սպառնում են մարդու գոյությանը։

Ուստի, երկրի յուրաքանչյուր անկյունում արտադրական գործունեության կազմակերպման ժամանակ պետք է նախ և առաջ ելնել միջավայրի բնական պայմանների հավասարակշռության պահպանման անհրաժեշտությունից, մշակել բնությունից օգտվելու գիտական կանոններ՝ բնական ռեսուրսների օգտագործման ձևերն ու չափերը։

Միջավայրի բնական ընթացքի պահպանման կարևոր պայմանը՝ վնասակար նյութերի բացառումն է, հատկապես օդային ու ջրային ոլորտներում։

Երկրորդ նախապայմանը՝ բնական ռեսուրսների և առաջին հերթին, տարածքի նպատակային ու խնայողաբար օգտագործումը։

Հիմնական նախապայմաններից մեկն էլ կենսածին ռեսուրսների լայն արտադրական կազմակերպումն է, փոփոխվող տարածքների կենսաարդյունավետության ֆունկցիայի կամ մեխանիզմի պաշտպանությունը։

Այդ բոլորի իրականացումը պահանջում են բնության գոյատևման օրինաչափությունների ճանաչում, նրա հետ վարվելու մշակութային նորմերի ու սովորույթների դաստիարակում։ Այս գործում շատ կարևոր են նաև հասարակական հարաբերությունները կանոնավորող օրենքների ու ակտերի մշակումը, քանզի բնական միջավայրն իրենից ներկայացնում է համաժողովրդական սեփականություն, այն էլ ոչ միայն տվյալ ժամանակահատվածում ապրող մարդկանց, այլ գալիք սերունդների համար ևս։

Առանձնացվում են բնական միջավայրի պահպանման երկու լուծումներ։ Առաջինը դա միջավայրի պահպանումն է բուն տարածքի սահմաններում՝ բրնական ռեսուրսների օգտագործման ընթացքում։ Այլ կերպ, այս ձևն անվանվում է ռացիոնալ բնաօգտագործում, որքանով թույլ են տալիս արտադրական տվյալ զինվածությունը և հասարակության պահանջմունքի ապահովման ձգտումները։

Այս լուծումը տարբեր երկրներում տարբեր կերպ է ընթանում և, առայժմ, ողջ մոլորակի առումով բերում է բնական միջավայրի աղտոտման։ Երկրորդ լուծումը պայմանավորված է որոշակի տարածքներում բնական ռեսուրսների տնտեսական օգտագործման արգելման կամ դանդաղեցման հետ։ Դա այսպես կոչված «հատուկ բնապահպանվող տարածքների» կազմակերպումն է, լոկալ, ռեգիոնալ և գլոբալ մասշտաբներով։ Միջավայրի և նրա տարրերի ու բաղադրամասերի պահպանման այս ուղին (կամ լուծումը) լայն ճանաչում է գտել համարյա բոլոր երկրներում։

Այս հիմնահարցի վճռական ժամանակակցության նշանակությունն ավելանում է նրանով, որ նման տարածքներն ուղղված են լուծելու ոչ միայն էկոլոգիական խնդիրներ, այլև կենսաձևերի գենետիկական ֆոնդի, հազվադեպ, էնդեմիկ, գիտական ու էսթետիկ տեսակետից մեծարժեք առաջացումների և անհետացող տեսակների պահպանման ու բազմացման հարցերը։

«Հատուկ բնապահպանվող տարածքներ» հասկացությունը իր մեջ ընդգրկում է այն բոլոր պահպանվող բնական տարածքային ձևերը, որոնց գլխավոր նպատակը միջավայրի անփոփոխ պահպանությունն է։ Նման տարածքներն իրենցից ներկայացնում են երկրի լանդշաֆտային թաղանթի առանձին բնատեղամասեր, որոնք լիովին կամ մասնակի, ընդմիշտ կամ ժամանակավորապես հանվում են տրադիցոն ինտենսիվ տնտեսական օգտագործման ոլորտից և հատկացվում բնական միջավայրի բնականոն հավասարակշռության պահպանմանը, նրա գիտական, ճանաչողական, կուլտուր-էսթետիկական ու պատմա-տնտեսական արժեքների պաշտպանմանը։

Ներկա պատկերացմամբ առանձնացվում են հատուկ պահպանվող բնական տարածքների երեք խմբերի՝ միջավայր կարգավորող (միջավայր պաշտպանող), ռեսուրս պահպանող (ռեսուրս վերականգնող) և օբյեկտ պահպանող (օբյեկտ պաշտպանող)։

Առաջին խումբը կոչված է պահպանելու և կարգավորելու նախ և առաջ միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը։ Այստեղից էլ կարելի է առանձնացնել այս խմբի մեջ մտնող բնապահպանական ձևերի գլխավոր նպատակը կամ ֆունկցիան՝ շրջակա միջավայրի էտալոնային լանդշաֆտների պահպանությունը։ Այս խմբի մեջ են դասվում կենսոլորտային ու ռեգիոնալ արգելոցները, ռեզերվատները, արգելավայրերը, բնական հուշարձանները և այլ ձևեր։

Երկրորդ խմբի կազմում հանդես են գալիս առավելապես անթրոպոէկոլոգիական տեսանկյունով պահպանվող տարածները. ընդգրկում են հիմնականում ռեկրեացիայի նպատակով օգտագործվող հողատեսքերը՝ ազգային ու ռեգիոնալ բնական պարկեր (զբոսայգիներ), առոջարանային պաշտպանիչ և բնակավայրային շրջակա կանաչ տարածքներ, տուրիստական ու էկոլոգիական հրթուղիներ և այլն։

Առանձին խումբ են կազմում թանգարանային տիպի հատուկ պահպանվող բնական տարածքները։ Վերջիններս բաժանվում են երեք ենթախմբերի՝ համալիրային, ճյուղային և օբյեկտային (կետային)։

Այս խմբի մեջ են մտնում պատմա-մեմորիալ արգելոցները, ճարտարապետական և դեկորատիվ զբոսայգիների համալիրները, բնական թանգարանները և այլն։ Այլ կերպ ասած, բնապահպանվող տարածքների երրորդ խումբը ներառնում է կուլտուրական լանդշաֆտների լավագույն նմուշները։

Համառոտակի կանգ առնենք մեր հանրապետությունում այս պրոբլեմի դրվածքի և լուծման ընթացքի վրա։

Անշուշտ, սույն հոդվածում հարկ չկա բննարկել մեր հանրապետությունում հատուկ պահպանվող բնական տարածքների անցատման չափանիշները կամ ձևերի դասակարգման խնդիրները։ Դրանք մասնագիտական նեղ հարցեր են, միայն նշենք, որ դրանք իրենց հիմնավորումը պետք է ստանան լանդշաֆտագիտական տեսությամբ, այսինքն ունենան աշխարհագրական ընկալում։

Նախ և առաջ ամեն մի բնական շրջանի սահմաններում տարածքների քանցը պետք է ելնի այն անհրաժեշտ ձևերի ստեղծումից, որոնք կապահովեն տվյալ բնաաշխարհագրական խոշոր միավորի էտալոնային լանդշաֆտների պահպանությունը։ Այդ գործում երկրորդ քայլը՝ առաջնային խնդրի կատար-

ման ապահովման նպատակով, պահանջվող տարածքների չափերի, ֆունկցիոնալ շրջանցման և բնույթյան մեջ նրանց ճիշտ սահմանազատումների իրականացումն է։

Առաջին հերթին խոսքը վերաբերվում է արգելոցային ցանցի կազմակերպմանը։ Այս գործում սեսական հիմք է ծառայում լանդշաֆտագիտությունը։ Այսպես, քանի որ արգելոցների գլխավոր նպատակը խոշոր ռեգիոնալ միավորների էտալոնային լանդշաֆտների պահպանությունն է, ապա լեռային երկրներում նրանք պետք է ընդգրկեն տարածքին բնորոշ ողջ բարձունքային գոտիական սպեկտրը և ոչ թե մեկ օղակը, ինչը դիտվում է մեր հանրապետությունում։ Այլ կերպ ասած լեռնային արգելոցները պետք է, որ իրենց սահմաններում ընդգրկեն էլուվիալ, տրանզիտ և սուպերակվալ լանդշաֆտների լծորդված գենետիկական տիպերը՝ ողջ ջրահավաք ավազանի սահմաններում։

Երկրորդը, ամեն մի բնապահպանվող օբյեկտ կարելի է պահպանել միայն իր շրջակա միջավայրով։ Ուստի պահպանվող օբյեկտների շրջակայքում պետք է նախատեսել էկոլոգիական պաշտպանիչ գոտի՝ բուֆերային շերտ։ Եվ ան անցումային բուֆերային տարածքները պետք է շրջափակեն լեռնային արգելոցները։ Վերջիններիս մեծությունները ու չափերը պայմանավորված են շրջակա լանդշաֆտների բնույթյամբ, սահմանագծվում են բնական ջրբաժաններով։

Լանդշաֆտային մոտեցում կիրառվում է նաև արգելոցների ֆունկցիոնալ շրջանացման հարցերը լուծելիս, ինչպես և շրջանի ողջ բնապահպանական համակարգի սխեմայի մշակման աշխատանքներում։

Շատ կարևոր է նաև որոշակի շրջանում բնապահպանվող տարածքների սիստեմի ռացիոնալ տարբերակի ստեղծումը։ Այն պետք է ծառայի ոչ միայն բնական եզակի առաջացումների պահպանմանը և միջավայրի պահպանմանը և միջավայրի էկոլոգիական հարցերի վճռմանը, այլև նպաստի տվյալ շրջանի առավել կարևոր բնապահպանման խնդրի պարզաբանմանը (այսպես, Սևանի ավազանում բնական տարածքների ողջ պահպանական սիստեմը պետք է գործի Սևանա լճի էկոլոգիական նպատակներին)։

Մեր հանրապետությունում այս խնդրի լուծումը գտնվում է համարյա թե սաղմնային վիճակում։ Անշուշտ, որոշակի աշխատանքներ կատարվել են. դեռ 1958 թվականից կազմակերպվել է բնապահպանվող տարածքների ցանց՝ որոշակի ձևերով։ Սակայն դրանց մեծ մասը չունեն գիտական հիմնավորում՝ չեն կարող բավարարել վիճակը, լուծել միջավայրի էկոլոգիական հարցերը։ Դրանց տարածքային բաշխվածությունը, սահմանազատումները, ռեգիոնալ ամբողջականությունները ու զատվածությունը չեն համապատասխանում հանրապետության բնական պայմանների ու լանդշաֆտների տարածքային կառուցվածքների առանձնահատկություններին։ Հարկավոր է այն հիմնովին վերակառուցել։

Արժանին մատուցելով հանրապետությունում այս գործի կազմակերպիչներին (հիմնականում կենսաբաններին) նշենք, որ շատ դեպքերում սխալ են մեկնաբանվել բնապահպանման առանձին ձևերի բովանդակությունը։ Այսպես, օրինակ, առողջարանային վայրերի շրջակա պաշտպանիչ անտառային լանդշաֆտները հայտարարվել են արգելավայրեր, այն դեպքում, երբ դրանք ֆունկցիոնալ առումով այլ խմբի մեջ են դասվում։ Կամ թե Երևանի վայրի դորենի պուրակները հայտարարվել է արգելոց, իրականում դա ռեզերվատի բնորոշ օրինակ է։ Արգելավայր է հայտարարվել Գորովանի եզակի ավազուտները, երբ այն լանդշաֆտային բնական հուշարձան է։ Կարելի է շատ բաց-

թողումներ և անճշտություններ թվարկել գոյություն ունեցող հանրապետական սխեմայից։ Վերջինիս սահմաններում չեն ընդգրկված բնական հուշարձանները, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում հասնում են հարյուրների, դրանց կեսից ավելին անկենդան բնության եզակի նմուշներ են։ Բացի Սևանի ազգային պարկից հանրապետության տարածքում օրինականորեն առանձնացված չէ բնական ոչ մի պարկ (կբուսայգի)։ Չեն առանձնացվել բնական ռեզերվատները, որոնք իրենցից ներկայացնում են փոքր բնատնդամասային արգելոցներ։ Անհրաժեշտություն է հանրապետությունում արգելավայրային ցանցն ընդարձակել՝ ներգրավելով ոչ միայն անտառային եզակի տարածքներ, այլ Հայկական լեռնաշխարհին բնորոշ այլ էկոսիստեմների ներկայացուցչություն՝ առավելապես լեռնային հրաբխային տափաստանների, կմախքային ֆրիգանոիդների, աղուտային կիսաանապատների և այլն։ Բնապահպանվող տարածքների ցանցը պետք է ընդարձակել՝ ընդգրկելով պատմա-ճարտարապետական կոթողների, շրջակա լծորդված բնատեղամասերով, ինչպես նաև հնագույն բնակատեղիների, հերոսամարտերի և պատմության մեջ նշանակալից դեր խաղացած այլ տեղավայրերը։

Այս պրոբլեմը ոչ միայն գիտա-էկոլոգիական, այլև կուլտուր-ազգային հիմնահարց է։

Մեր կարծիքով պրոբլեմի լուծման գծով առաջիկա անելիքները հետևյալումն են. նախ և առաջ, որոշել հատուկ պահպանվող բնական տարածքների տիրոջը՝ իրավասու մարմնին, որը մեր կարծիքով հանրապետության միջավայրի պահպանության կոմիտեն է։ Այնուհետև կոմիտեի սահմաններում ստեղծել ուրույն կազմակերպչական խումբ, որը կմշակի խնդրի լուծման վարչական ձևերն ու իրականացման ուղիները։ Կոմիտեի հանձնարարությամբ Գիտությունների ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտի լանդշաֆտագիտական լաբորատորիայում կազմակերպել գիտահետազոտական արշավախումբ, ընդգրկելով նաև ճյուղային մասնագետների՝ կատարելու դիտական ուսումնասիրություններ պահպանվող բնական տարածքների հանրապետական սխեմայի մշակման ուղղությամբ։ Նման հետազոտությունների վերջնական արդյունքները պետք է լինի բնապահպանվող օբյեկտների ու տարածքների անձնագրումը, կադաստրների կազմումը ու նրանց տարածքի ֆունկցիոնալ մասնագատումը, պահպանական, պաշտպանական, օպտիմիզացիոն ու մելիորացիոն միջոցառումների համակարգերի և օգտագործման ռացիոնալ տարբերակների մշակումը։

Ակնհայտ է, որ զարգացած երկրներում, այս հարցերը լուծվել են դեռևս 50-ական թվականներին։ Քննարկվող հարցերի վճռումը ոչ միայն հայրենասիրական գործ է, այլ ազգային հարստությունների նպատակային օգտագործման ու պահպանության խնդիր։ Պետք է մոռանալ, որ բնական բարձր արժեք առաջացումների ճանաչողական նշանակությունը շատ հաճախ ավելի մեծ նյութական օգուտ է բերում, քան նրանց տնտեսական օգտագործումը։

Կանգ առնենք հարցի մի կողմի վրա։ Եվ լեռնային երկրներում երկու-երեք տոկոսի առանձնացումը, որպես հատուկ պահպանվող բնական օբյեկտ, չի կարող վճռել էկոլոգիական հարցեր, մանավանդ ուրբանիզացված շրջանների սահմաններում։ Այս գործում պետք է նկատի ունենալ լեռնային համալիրների առանձնահատկությունները՝ բարձունքային գոտիական համադրվածությունը։ լեռնալանջերի և լեռնահովիտների լանդշաֆտների սերտ կապակցվածությունը, անտառային լանդշաֆտների յուրատիպությունը, որպես միջավայր ստեղծող և կարգավորող էկոլոգիական գործոն, մթնոլորտի դինամիկայի սեզոնային ու ֆազային արագ հերթափոխը, քամիների անկանոն բնույթը և այլ բնաշխար-

հագրական (ինչպես և տնտեսաաշխարհագրական) երևույթներ ու հարցեր։

Բանը նրանումն է, որ հանրապետության տարածքի մոտ տասներկու տոկոսը կազմող լեռնային անտառները ինքնատիպության համարվում են հատուկ բնապահպանվող տարածքներ։ Եթե դրան ավելացնենք նաև Սևանա լճի գրաված տարածքը, ապա այդ երկուսը միասին կազմում են շուրջ 17 տոկոս։ Ուստի պահպանվող բնական տարածքները կարող են կազմել Հայաստանի Հանրապետության տարածքի 20 տոկոսից ավելին՝ (որոշ երկրներում՝ ԳԴՀ, Ռումինիա, Ավստրիա, Չեխոսլովակիա և այլն, նման տարածքները կազմում են երկրի 25—30 տոկոսը)։ Այստեղից եզրակացություն, բնապահպանվող տարածքի չափերը պետք է որոշվեն ոչ թե պետական հաստատությունների կողմից սահմանված նորմերով, այլ երկրի բնական պայմանների առանձնահատկություններով։ Բացի այդ բնապահպանվող տարածքների թե ընդհանուր բնած մակերեսները, և թե ձևերը, տարբեր կլինեն հանրապետության տարբեր բնաաշխարհագրական շրջաններում՝ Շիրակում, Զանգեզուրում, Վայքում, Սևանի ավազանում և այլուր։

Առաջիկա խնդիրը՝ նման օբյեկտների ու տարածքների գիտական հաշվեգրումն է, պահպանական ցանցի ստեղծումը, դրա կատարման համար պահանջվում է խոշոր մասշտաբի լանդշաֆտա-տոպոլոգիական քարտեզագրումներ։

Համառոտակի քննարկենք այս հարցի մի այլ կողմը ևս՝ բնապահպանման զուգահեռ պահպանվող տարածքների մեծարժեք ռեսուրսների օգտագործման հնարավորությունները և նախադրյալները։ Խոսքը վերաբերվում է նախ և առաջ բնական պատկերին (կբոսայգիներին)։

Չքննարկելով բնական պարկերի ստեղծման գիտական սկզբունքները, ավելացնենք, որ հանրապետության տարածքում նախադրյալներ կան կազմակերպելու մի շարք ազգային բնական պարկեր։ Այսպես, բազմաբնույթ և էկզոտիկ լանդշաֆտներով ազգային պարկի հիանալի օբյեկտ է իրենից ներկայացնում Որոտանի հովիտը՝ Զանգեզուրում («Սյունիք» ազգային պարկ), ներառնելով Տաթևի կիրճը, Հարժիսից արևելք, հնագույն բնակատեղիներ Շինուհայրը, Հալիձորը, Խոտը, Խնձորեսկը, շրջակա լանդշաֆտներով և մեծարժեք պատմա-ճարտարապետական հուշարձաններով։

Ազգային յուրատիպ բնական պարկ է Ծաղկունյաց լեռնաշղթայի միջլեռնային հովիտների շրջանը («Ծաղկունք» ազգային պարկ), ներառնելով Մարմարիկի, Ծաղկաձորի, Արղասանի, Բուժականի հովիտները, Արաիլեռ հրաբխակոնը անտառային լանդշաֆտներով։ Այս ազգային պարկը պետք է որ ունենա մանկական մասնագիտացվածություն։ Լիովին այլ բնույթի և տիպիկ հայկական է «Գառնի» ազգային պարկը, Ազատի հովտում։ Վերջինիս սահմաններում կան հիանալի պատմա-ճարտարապետական կոթողներ և բարձրարժեք ու հազվադեպ բնական հուշարձաններ։ Այս ազգային պարկի կարևոր կողմերից մեկը Երևանին մոտ գտնվելն է և խոշոր ջրավազանի առկայությունը (Ազատի ջրամբարը)։ Գառնի ազգային պարկի զարդն են համարվում Գեղարդի, Գառնիի, Հավուցթառի հանրահայտ կոթողները, լավային ապառների սյունաձև անջատումների և նստվածքային ապառների կառուցվածքային ձևերի մերկացումների եզակի նմուշները, շոր թփուտային նոսրանտառների բարձունքային գոտիների կտրուկ հերթափոխումները, կիսաանապատային գոտու սահմաններում Ազատի ողողատի անտառա-պուրակները, բնական ջրերի և հանքային աղբյուրների բյուրավոր հելքեր և այլն։

Փորբկովկասյան մարզի անտառային բնությանը հատուկ լեռնային անկրկնելի լանդշաֆտների բազմազանությամբ է բնորոշվում «Գուգարք» ազգային պարկը, Դեբեդի հովտում (Գայլաձորի բնատեղամաս)։

Հանրապետության տարածքում բնական և բնաանթրոպոգեն լանդշաֆտները ստեղծվել են լավագույն նախադրյալներ կազմելու նաև ռեգիոնալ պարկեր՝ գիտաճանաչողական, սպորտային, հանգստի ու բուժման, տուրիզմի և այլ նպատակներով։ Դրանց շարքին պետք է դասել նաև բազմաթիվ և յուրատեսակ մերձքաղաքային և մերձառողջարանային անտառագոտիներն ու կանաչ գոտիները։

Եթե այս բոլորին ավելացնենք հարյուրավոր բնական և պատմաճարտարապետական հուշարձանների առկայությունը՝ նրանց ճանաչողական արժեքների օգտագործման հնարավորությունները, ապա իրոք որ կան լայն նախադրյալներ մեր հանրապետության տարածքում ստեղծելու հանգստի ինդուստրիա՝ գիտական հիմունքներով բնական բարձրարժեք առաջացումների ու էկոլոգիական անաղարտ միջավայրի պահպանման նախադրյալներով (աղյուսակ 1)։

Աղյուսակ 1

Հայաստանի հանրապետությունում պահպանվող բնական տարածքների մակերեսները (հեռանկարում)

Պահպանվող տարածքի տիպը	մակերեսը, հա	հանրապետության տարածքի %
1. Արգելոցներ	60000	2,0
2. Արգելավայրեր	35000	1,1
3. Ազգային պարկեր	100000	3,0
4. Բնական պարկեր	8000	0,25
5. Ռեզերվատներ	1000	0,03
6. Պաշտպանիչ գոտիներ	2000	0,06
7. Բնական հուշարձաններ	1000	0,03
8. Բնական ջրամբարներ		
9. Առաջին կարգի անտառներ և	140000	4,1
առողջարական կանաչ գոտիներ	300000	10,0
10 Բնապատմական հուշարձանների		
շրջակա միջավայր	2000	0,06
Ընդամենը	650000	21,0

Մեկ անգամ ևս նշենք, որ բացի առաջնային բնապահպանական նպատակներից, հատուկ պահպանվող բնական տարածքները կարող են բերել տնտեսական մեծագույն օգուտ՝ եթե ճշտորեն ու լրջորեն կազմակերպվեն դրանց հոգևոր ռեսուրսների օգտագործումը։

Г. Б. ГРИГОРЯН

ОБ УСОВЕРШЕНСТВОВАНИИ СЕТИ ОСОБО ОХРАНЯЕМЫХ ПРИРОДНЫХ ТЕРРИТОРИЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Резюме

На территории Республики Армения встречается множество редких и уникальных природных объектов, в основном ландшафтно-геоморфологических и геологических памятников. Они пока не включены в систему охраняемых территорий. Несколько тысяч природно-антропогенных и историко-архитектурных памятников, в основном сред-

невековых и античных, также не включены в систему охраняемых территорий в геоэкологическом смысле.

Действующая ныне схема особо охраняемых территорий, разработанная биологами еще в 50-х годах, устарела и содержит ряд неточностей. Она не обеспечивает охрану всех форм охраняемых объектов и не способствует решению региональных геоэкологических задач.

В работе рассматриваются ландшафтно-географические принципы организации горных заповедников и национальных парков, а также вопросы паспортизации всех типов горных охраняемых природных объектов.

В методическом плане предлагается территориальное разграничение охраняемых объектов провести в пределах местных гравигенных ландшафтов, активно применяя бассейновый метод функционального зонирования территории.

G. B. GRIGORIAN

ON THE IMPROVEMENT OF THE REPUBLIC ARMENIA ESPECIALLY PROTECTED NATURAL TERRITORIES NETWORK

Abstract

The landscape-geographical principles of mountain reservations and national parks as well as the problems of all types of mountain protected natural units introducing a passport system are considered.

In a methodical aspect it is suggested the protected units territorial demarcation to draw in the limits of logal gravigenetic landscapes, actively applying the basin method of a territory functional zoning.

Известия АН Армении, Науки о Земле, 1992, XLV, № 3, 59—65.

УДК:550.38(479.25).

С. Р. ОГАНЕСЯН, А. О. СИМОНЯН, Д. С. ЧИКОВАНИ

ВЕКОВЫЕ ВАРИАЦИИ ГЕОМАГНИТНОГО ПОЛЯ НА ТЕРРИТОРИИ АРМЕНИИ ЗА ПЕРИОД 1975—1986 ГГ.

Изучены вековые вариации геомагнитного поля на территории Республики Армения. Обсуждены вопросы источника и динамики вековых вариаций. Обнаружена пространственная неоднородность протекания годовых изменений геомагнитного поля на территории республики. Вековая вариация поля имеет относительно высокое значение в северной части территории республики (11 *нТл*) и низкое значение в южной части (7 *нТл*). Заметим, что территория республики находится далеко от фокуса векового хода по модели вековых вариаций ИЗМИРАН за эпоху 1980 г. Предполагается, что наблюденный разброс значений связан с процессами накопления тектонических напряжений, протекающими в земной коре территории республики.